

ՈՒԹԵՐՈՐԳ ՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի  
Тифлисс. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սուս օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Արծրունու գալերեում թատրոնական շե-  
նութիւնը պատրաստ է և ջանկարողներին  
վարձով է տրվում:

Նոյն տեղ վարձով են տրվում և մաքազին-  
ներ:

Театральная зала въ галлерей Ар-  
пруни окончена и отдается въ наймы  
подъ спектакли и концерты.

Тамъ-же отдаются въ наймы и мага-  
зины.

1—10

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին առ-  
նությունը: Նամակ վ. Ազուլիսից: Նամակ խմբ-  
ագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին:  
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին  
տեսություն: Վախիկ: Թղթակցութիւնը:  
Թիֆլիս: Նամակ խմբագրին:—Սուս լու-  
րեր:—Վախիկ: Ներքին:—Հայտարարութիւն-  
ներ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Լարսական լրագիրները այժմ  
զբաղված են գերմանական պար-  
լամենտի մէջ եղած վիճաբանու-  
թիւններով մաքսային հարկի մա-  
սին և այն հետևանքներով, որ  
ոչնեցան այդ վիճաբանութիւնները:  
Մաքսային նոր հարկի մասին  
եղած վիճաբանութիւնների գր-  
խաւոր հետևանքներից մէկը այն  
եղաւ որ գերմանական պարլամեն-  
տի նախագահ ֆոն-Ֆորկենբեկ  
հրաժարվեցաւ իր պաշտօնից:

Ֆոն-Ֆորկենբեկի տուած հը-  
րաժարականը Բերլինում մի քա-  
ղաքական նշանաւոր անցքի բնա-  
ւորութիւն ստացաւ:

Եթե՛ երբ գերմանական պար-  
լամենտի նախագահը թողնէ իր  
պաշտօնը և ընդգիմադրական  
կուսակցութեան գլուխն անցաւ,  
պարլամենտի գործերը մի նոր  
գիւղի, մի նոր ուղղութիւն կը սը-  
տանան: Եթե՛ դիմքը վաղուց  
պատրաստվում էր իշխան Բիս-  
մարկից և նա կարող է այն հե-  
տևանքների հասցնել որ կառա-  
վարութիւնը մեծ անբաւականու-  
թիւններ կունենայ ժողովրդական  
ներկայացուցիչների հետ:

Իբրև պարլամենտի նախագահ

ֆոն-Ֆորկենբեկ պէտք է արտա-  
յայտէ պարլամենտի տրամադրու-  
թիւնը և մի և նոյն ժամանակ  
պէտք է համաձայնութիւն պահէ  
կառավարութեան հետ: Իր դը-  
րութեան այդ երկու պայմաննե-  
րից պարլամենտի նախագահը զըր-  
կվեցաւ վերջին ժամանակները:  
Ֆինանսական և մաքսային վերա-  
նորոգութիւնների նախագիծը, որ  
առաջարկեց իշխան Բիսմարկ յե-  
ղափոխութիւն գործեց Գերմա-  
նիայի ներքին քաղաքականութեան  
մէջ և կառավարութեան կուսակ-  
ցութիւնը բողոքովն նոր տարրե-  
րից կազմեց:

Իշխան Բիսմարկ ինչպէս յայ-  
տնի է, վերջին տաս տարիների  
ընթացքում գործում էր այդպէս  
անուանված ազգային-ազատա-  
միտների կուսակցութեան մեծա-  
մասնութեան վրա հիմնելով:  
Եթե՛ այդ կուսակցութիւնը  
թշնամական դիրք է բռնել իշ-  
խանի վերաբերութեամբ, իսկ նրա  
պաշտպանները դարձել են իր նախ-  
կին հակառակորդները, կղերա-  
կանները, որոնց հետ դեռ նորե-  
րում իշխան Բիսմարկ զայրացած  
պատերազմում էր:

Լրագիրները այն կարծիք են  
յայտնում, որ երբ այնպիսի մար-  
դիկ, ինչպէս ֆոն-Ֆորկենբեկ հե-  
ռանում են կառավարչական կու-  
սակցութենից, երբ ընդգիմադրող-  
ների կուսակցից են դառնում, կա-  
ռավարութիւնը իր ոտքերի տակ  
հաստատ հող չէ ունենում:

Վ. Տ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Վ. ԱԶՈՒԼԻՍԻՑ

19 մայիսի

Տէր Մովսէս քահանայ վերջապէս հեռացաւ այս-  
տեղից: Նրան կանչեցին Լեմբոնի: Բայց քահա-  
նան չը մոտեցաւ իր վերջին միաց բարեան առկ  
աղուցներին և յետոյ գնաւ:

Տէր Մովսէսի փոխարէն գահնապետ Հ. Արա-  
խանեանցի առաջարկութեամբ հոգեւոր կառավա-  
րութիւնը նշանակեց Գողթնաց գաւառի գործակալ  
տէր Արմեն քահանային: Դա ութսունամեայ մի  
զատանալ քահանայ է, որին պ. գահնապետը մի  
քանի տարի առաջ ստիպում էր թողնել քահա-  
նայական պաշտօնը, որովհետ անընդունակ է կա-

տարիւն: Իսկ այժմ ծերունին մանկացաւ, նրա  
համար որ, պ. գահնապետին պէտք էր...

Մայիսի 15-ին օրինորայ զարդի գահնապետ  
կապալաւ ընդհանուր ժողով, որի մէջ Ազուլիսի  
զարդների բարեկարգութեան համար կազմված  
մասնաժողովը պիտի կարգար իր գործունէութեան  
հաշիւը: Ընդհանուր ժողովում ներկայանում են  
ուսուցիչներից չորսը, որոնց թւում լինում են  
պ. Մելք-Յակոբեանը և կրօնաւարաց տէր Մեսրոպ  
քահանային: Մասնաժողովի անդամները ուսուցիչ-  
ների ներկայութեան պատճառով չեն ջանկարում  
նիստը սկսել և կարգաւ իրանց պատրաստած գոր-  
ծը, չը նայելով հանդիսականների քանիցս անգամ  
ինդրանացը: Նոյն ժամանակ պ. Մելք-Յակոբեա-  
նը ոտքի է կանգնում և ուսուցիչների կողմից ա-  
սում է. «Եթէ մասնաժողովի պատուելի անդամ-  
ները մեր ներկայութեան պատճառով է, որ չեն  
կամենում սկսել նիստը, ես իմ և իմ պաշտօնա-  
կիցների կողմից յայտնում եմ, որ մենք չենք եկել  
քննելու, կամ կրկնակայի ենթարկելու մասնաժո-  
ղովի կատարած գործը: Բայց որովհետեւ դա զու-  
րոյցներն է վերաբերում, որոնց մէջ մենք պաշ-  
տօն ենք վարում, այս պատճառով էլ աւելի հե-  
տաքրքրում է ուսուցիչներին լսել, և եթէ հարկա-  
ւոր կը լինի, մի քանի բացատրութիւններ տալ:  
Պարս Մարտիրոս Տէր-Մկրտչեանը, ժողովի  
նախագահը, պատասխանում է, թէ չէ կա-  
րելի, որ ուսուցիչները ներկայ գտնուին: Պ.  
Մելք-Յակոբեանի և նրա մէջ սկսվում է տաք  
վիճաբանութիւն: Այն ժամանակ պ. Բ. Տէր Մի-  
քէլեանցը, որ նոյնպէս մասնաժողովի անդամներից  
մէկն էր, պաշտպանում է ուսուցիչների իրաւունքը,  
յայտնելով, թէ ժողովը մի այնպիսի ժողով է, որ  
ամեն հայ, ամեն մարդ կարող է մտնել, և մասնա-  
ւանդ ուսուցիչները, որոնք աւելի ծանօթ են գոր-  
ծին, և աւելցնում է, եթէ մասնաժողովի ան-  
դամները մի բան չունեն թաղանթաւ ժողովրդից,  
էլ ինչու են վախճում ուսուցիչների ներկայու-  
թիւնը: Պարս Տէր-Մկրտչեանցը այլ ևս խօսք չը  
գտնելով պատասխանելու, առնում է զվարկը և  
զուրկ է զալիս ժողովը, նրան հետևում է և պ.  
Տէր-Միքէլեանցը: Ուսուցիչները վիրտուոզված, նոյն-  
պէս հետևում են: Ժողովը քանդվում է:

Բայց պ. Տէր-Մկրտչեանցը, կամենալով, որ իր  
յարուցած խռովութիւնը աւելի կատարեալ լինի,  
ժողովը դաժնիքը դուրս գալուց յետոյ, սպասում է  
որ զարդի բակում, և հանդիպելով պ. Մելք-  
Յակոբեանին, երկուսի մէջ ծագում է մի սաստիկ  
անբաւականութիւն, մինչև հասնում է հայտնաբ-  
նելի և սակաւ էր մնում, որ պիտի ծեծի փոխար-  
կուէր, եթէ պ. Մելք-Յակոբեանը խոսեմութիւն  
չանէր և չուտ չը հեռանար:

Մենք մեղադրում ենք պ. Մելք-Յակոբեանին:  
Տօ անբաւական, դու Պարսկաստանում ինտրիգայի  
դոս դարձար, էլ ճի սատանան քեզ մղորեցրոց,  
որ գնացիր զօկերի մէջը մտար: Պէտք է ազուցելք  
քեզ մի բան, որ հայտն է, որ խելքդ գլխիդ դար: Դու  
չէիր իմանում, որ աղուցիցը ձկնկաթի ամբիկա-  
ցիլը» չեն, այլ նոյնպիսի խաղաղ և անհարգա-  
կալ հայեր, որպէս ամեն տեղ լինում է հայր:

Ազուլիսի զարդների ուսուցիչներին ընդհա-  
նուր ժողովը մէջ ներկայանալ արգելել անիրա-  
ւացի ենք գտնում, այն կողմից, որ ամբողջ ուսուց-  
չական խումբը երկու կուսակցութեան է բաժան-  
վում. մէկը, տեղացի ուսուցիչները, միւրը, ուրիշ  
երկրից հրաւիրվածները, այս վերջիններին արգելե-  
ցին ժողովում ներկայանալ, իսկ ընկերներին ժողով  
հրաւիրեցին: Եւ պ. Տէր-Մկրտչեանը, որ չէր ցան-  
կանում օտարերկրացի ուսուցիչները ներկայ գտնու-  
նելին, պատճառն այն էր, որ վախճում էր, չը  
լինէր ինչ որ անհրաժեշտ մասնաժողովի գործունէու-  
թեան դէմ, որ իրան չատ հաճելի չէր լինի... Այլ  
և, պարունը գիտէր, որ պ. Մելք-Յակոբեանը  
պատրաստել է մի գրուածք զարդների դրութեան  
և նրանց բարեկարգութեան վերաբերութեամբ, որ  
պիտի կարգար ժողովը մէջ, բայց պ. Տէր-Մկրտ-  
չեանը չը կամեցաւ, որ հանդիսականները լսէին,  
մի դուցէ մասնաժողովի գործունէութեան խա-  
ղախութիւնը յայտնէր:

Լրագրութեան մէջ, վերջին ժամանակները Ազու-

լիսի զարդների հոգաբարձութեան վրա եղած յար-  
ձակումները, որպէս թէ նրանք խոհմտաբար չեն  
կատարել իրանց պաշտօնը, ուսուցիչների անհամա-  
ձայնութիւնը չեն զսպել, թող չեն գտնվել և այլն,  
—բողոքովն անհիմն են: Դրանք մի քանի չարա-  
միտների զբաղարարութիւն է, որ աշխատում են հին  
հոգաբարձուների վարկը կտրել ժողովրդի առջև,  
որ իրանք ընտրված լինեն: Հոգաբարձուք ինչով  
են մեղաւոր, որ մի քանի աղաները տեղացի վա-  
րձակներին զրգուում են օտարերկրացիների դէմ,  
և նրանց մէջ խռովութիւն են գցում: Հոգաբար-  
ձուք ինչով են մեղաւոր, որ նոյն աղաները մի  
ամենալաւ վարձակներին զարդացնում են և նա  
թեւում է մեր զարդների վրա, ու հեռանում: Հո-  
գաբարձուք, որքան կարելի էր, գործեցին, զու-  
րոյցների արդիւնքը բարձրացրին, աշակերտների  
թիւը կրկնապատկեցին, տղայաց զարդում երրորդ  
դաստիարակում տղի ժամանակ, կարողացան Թիֆլիսից  
երեք ուսուցիչներ հրաւիրել խիստ աման ունեյի-  
ներով: Հոգաբարձութիւնը ինչով է մեղաւոր, որ  
մեր հասարակութիւնը իր ուսուցիչներին յարգել չը  
գիտէ: Որ օրինաւոր ուսուցիչը մեղանից գո՛հ դը-  
նաց. բողոքը եկան, տեսան մեզ, ճանաչեցին, և  
հեռացան: Մենք մեր անպատասխաններով  
միայն նրանց գրգռեցին նիւթ առեցին:

Ազուլիսում հայց բարձրացաւ, որ այսուհետեւ  
հոգաբարձուներին երկտասարդներից (???) ընտրեն,  
որովհետեւ հնացած մարդիկը բանի պէտք չեն գա-  
լիս: Այդ հարցը մտաւ մինչև անգամ լրագրութեան  
մէջ Ա. Տէր-Մկրտչեանի գրով: Գեղեցիկ միտք է,  
միայն ցանկալի կը լինէր, որ պ. Տէր-Մկրտչեանը  
առաջարկէր իր կանդիդատներին, և ցոյց տար, թէ  
որն է Ազուլիսի երկտասարդութիւնը: Եթէ նա մի  
քանի իր նամակ, Տէր-Մկրտչի պատմութիւն առաջին  
և երկրորդ դաստիարակներին երկտասարդ-  
ներ է համարում, շատ է սխալվում: Խօսք չը կայ,  
որ պարտը մէկն հէնց իրան է առաջարկում, և  
«Մախի» մէջ մի քանի անհամ և անմիտ նամակ-  
ներ տպել տարով, իրան գիտական է երևակայում:

Ազուլիսի զարդների բարեկարգութեան համար  
կազմված մասնաժողովը վերջապէս աւարտեց իր  
գործը և պատրաստած «ներգիրքը» կարգաց ընդ-  
հանուր ժողովի մէջ: Դա ուրիշ բան չէր, եթէ ոչ  
մի քանի աչք շլացնող և դատարկ Ֆորմալիստու-  
թիւններ, մի քանի հաղար անգամ խօսված, հաղար  
անգամ գրված, և միշտ անընդունալի մնացած  
յիմարութիւններ: Դրա համար է ասած. «երկնէր  
երկիր և երկիր», և ծնաւ մուկն չնային: Բայց նոյն  
ժողովը մէջ կարողացանք և պ. Աթաբեկեանցի  
կարծիքները, որոնք աւելի հիմնաւոր և աւելի ին-  
չացի կերպով մտածված էին: Նր նշանակէ, մի  
մարդու գլխից աւելի օգտուէտ բան դուրս եկաւ,  
քան թէ մասնաժողովի եթէ անդամների ուղեղից,  
որոնք մի և կէս ամիս որպէս թէ աշխատեցին,  
բայց գործը չինելու տեղ, քանդեցին:

Ազուլիսի զարդների համար կազմված մասնա-  
ժողովը, չէր կարող օգուտ բերել, բայց միայն,  
որովհետեւ նրա անդամները բոլորը (բացի մէկից)  
ներկայացուցիչ էին մի մի աշխ մի պարտի աշխ  
Եւ այս պատճառով անդամների ընտրութիւնը  
հէնց օկեցից խաղախութեամբ եղաւ: Նրանք չըն-  
տրվեցան ոչ քուէարկութեամբ և ոչ ձայների բազ-  
մութեամբ, այլ պ. Մ. Տէր-Մկրտչեանը, այդ Ա-  
զուլիսի առաջին աղան (!) ընտրեց միայն իր բա-  
րեկաններին և ինքը նրանց նախագահ դարձ-  
աւ, և ոչ որ ձայն չը հանեց: Ահա դրանք  
էին մասնաժողովի անդամները՝ պ. Տէր-Մկրտչեա-  
նի երեք փեսաները, պ. Տէր-Մկրտչեանցի հօր եղ-  
բոր որդին, պ. Տէր-Մկրտչեանցի ծառայի որ-  
դին, —բողոքը ինտերեսանտներ էին, բողոքը կապ-  
ված միմեանց հետ: Միակ մարդը, որ նրանց մէջ  
օտար էր, դա էր պ. Բ. Տէր-Միքէլեանցը, որը  
մասնաժողովի հէնց առաջին նիստից, տեսնելով  
նրանց խտրվելները, հեռացաւ: Նրանք միջկց:

Վ. Ա.



ԹԻԻՐԳԻԱ.

«Новое Время» լրագրիւր. մայիսի 17-ի  
Համարի մէջ մի քաղաքաճք է ստիւել «Débats»  
լրագրից, որի մէջ ասոված է Յրանսիական կա-  
ռավարութեան անուումով Բերլինի դաշնագրի  
61-դ. յօդուածի մասին, որ նրա իրազգոթման  
վրա էլ պէտք է նոյնքան ուշադրութիւն  
դարձնելի, որքան որ այժմ ուշադրութիւն է  
դարձնում ժուանական. հարցի վրա: Բ. Դուռը  
պարտաւորվում էր անյոյապաղ «sans plus de  
retard» մտցնել վերանորոգութիւններ Հայաս-  
տանի մէջ:

«Débats» լրագրի կարծիքով Հայաստանը  
իրաւունք ունի նոյն կազմակերպութիւնը  
վայելել, ինչ որ Լիբանանը: Նա ունի իր ազ-  
գային և եկեղեցի, գրականութիւն և անցեալ,  
որոնցով նա կարող է հպարտանալ: Կանոնա-  
ւոր կառավարութիւնը ոչ թէ միայն կը բար-  
ձրացնի Հայաստանի բարօրութիւնը, այլ նը-  
րան քաղաքակրթութեան կենտրոն կը դարձ-  
նի, որ ընդունակ կը լինի ազդել ամբողջ  
Փոքր-Ասիայի վրա:

ՆԱԽԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 14 մայիսի

Յերեւոյի Կոմիտասի անուան ժողովոյ վիճակու դարարեալ անդամոց տեղ նոր ընտրութիւններն կատարուելով, մայիս 11-ին ապգ. ժողովն ներկայ տարւոյց աւառային հիօտան արաւ. Նոր ընտրութիւններն բաւական գոհացուցիչ էին Վնդանաւոր հասնուող մը կար թէ արդի ընտրութիւններն իրենց կարեւորութիւնն պէտք ունենան ազգային ինդուոյ մէջ. այս գաղափարն այն աստիճան յառաջ դացած է որ երբ կը հարցնէի նոցա որք զլօւ. Շիշմանեան երեսօթիւնն ընտրեցին թէ ինչպէս մի բացակայ անձ որք վերադարձն շատ հաւանական չէ առ այժմ, կընտրէք երեսօթիւնն, կը պատասխանէին յմիջն. ասիմք փոքր պաշտօն մի է երեսօթիւննութիւնն, և անշուշտ դօւ. Շիշմանեան կը իրողու Տփիսի և կը վերադառնայ Պոլսի, իւր աթոռն նստակու.»

Դիտրուեղաց մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի են Օտեան և Սերովիչէն ընտրութիւնն և նոցապէս պաշտօնն ընդունին են: Օտեան և Սերովիչէն երկուք առնն ազգ. Ժողովոյ ատենակցեառն են. Օտեանն մի քանի տարիներէ հրաձեւաւ տուաւ երեսփոխանութիւնէ. և Սերովիչէն 13 տարիներէ հետէ ազգային խորհրդարանի սեմէն ներս չէ մտած: 1866-ին պետական հարուածով մը (coup d'état) սահմանադրութիւնն ռաժամանակեայ զաղբեցնողներու պարսպուելս կը հասարուէր Սերովիչէն, և մէկէից Պօղոս պարսիադքի. Ազգին սրտմտութիւնը ամէն էր նորա ղեկն և 1870-ին, նշանաւոր նստի մը մէջ Փարսիայեան ազգու ատենաքանութեանք մը կառաքարկէր որ ազգ. Ժողովը պարսաւանաց քուէով մը զատապարտէ զՍերովիչէն. այն օրն Օտեան էր ատենակցետ. իւր պերճախօս լեզուն միայն կարող եղաւ Սերովիչէնի պատիւն պահպանել միւրօկ տալով Փարսիականին առաջնորդ: Այս տաղանդաւոր քաղաքագէտ րօխկը միմ ծառայութիւններ մատուցած է ազգին, կառավարութեան առաջ իւր վայելած համարումով և ազդեցութեան չնորիւ: Սերովիչէն 66-է ի վեր քանիցս երեսփոխան ընտրուցեալ, այլ խնձն կառաւ այդ ազգային պարտականութիւնն կատարել. այս անգամ ապա-հով կասան իրէ վերստին իւր ձայնն Ժողովոյ մէջ լսելու կարող պիտի լինի:

Այսօր երևախոնամական ժողովն մեծ ուշադրու-  
թեան առարկայ է. պիտի համապատասխանէ իւր  
զորքերուն ազգին փառագանաց. յոշտաբ և մազ-  
թեմք. սակայն ժողովոյ անաջին քուէն ունանց  
չատ գոհոնակութիւն չը պատճառէր. ժողովն  
այդ քուէով իրեն աստեապետ ընտրեց (Ստեանիս  
էֆէնտի, Ապրիլ չկանք ըմբռնէ թէ էր այդ որա-  
տոնն զլացան Ստեանի-փաշայի որը այնքան աւ-  
ժանաւոր էր և ժողովն իմ ցոյց տուած է. Վոքը  
պիտի զարմանաք թէ միշտ պիտեանան մեծ մը  
ժողովոյ աստեապետ կը ընտրեն անոնք, կատ-

Քաղաքուհի նորքա միայն վարժութիւնն ունին: Օտեանս պերճախօս և զրազեւտ, իւր տոկոն աւելի ատենաւորանքներու բնմէն է քան ատենապետի արժեքն: Արտեփան-բաշա որ նոյնպէս ճարտասանական մեծ յատուկութիւններ ունի ժողով կառավարելու մասին իր գերազանցէ զՌոման: Բայց ստորի դիմաւորէ է որ Ստեփան-բաշա, զինուորական անձն է, ինքն բոլորէ, դիւանագիտական (diplomatiqne) գործերէ հեռու է, կառավարութեան քաղաքագէտ պաշտօնէից հետ չատ յարաբերութիւն չունի, իւր պաշտօնին մէջ բարձրագոյն աստիճանը գրուած է, և մանաւանդ աւելի պատերազմական գործոց նախարարութիւնը կտրուէ է Ստեփան-բաշայի ծառայութեանցն, քան Ստեփան-բաշա ակնկալութիւնն ունի ի նոյնանք 4 տարի է որ Ստեփան բաշա կատենագետէն երեսփոխանական ժողովոյ և փորձով ցոյց տուած թէ ամեն պարագայի մէջ ազգային շահերն անվիհեր պաշտպանող է: Իսկ Օտեանս պարտաւոր է իւր գործոց և շարժմանց մէջ աւելի զգուշաւոր լինել: Նա Թուրքոյի դիւանագիտներու զասնին կը վերաբերի, ամեն առաւօտ որ Բ. Գուռը երբեք, անաշխ տեսնէ անձն մեծ վէջերին և երկրորդը արեւաքնն գործող պնշտոններն, պարտաւոր է աւելի խոհմը շարժի: Մտերնիս Օտեանի ազգասիրութիւնը կատարմանաց ենթարկել է: Կ. Պալատ հայոց մեծամասնութիւնը զիս հայրենասէր անձ մը կը ճանաչէ: Սր մը, Խրիսմանի պատրիարքութեան իւրեք, Օտեանս, ատենական ազգ. ժողովոյ կառէր իւր պաշտօնական արժեքն: Յոմանք կասն թէ, Բ. Գրան հայ պաշտօնականներն կառավարութեան լրտեսներն են ազգ. ժողովոյ մէջ և հայ ազգը մատնելու կոչուած են, բայց միթէ հնար է պայտիս տարաբարզ ազգի մը զաւակներուն իրենց ազգի կործանմանն աշխատել, որ հայն որ պոպոխի վատ ոգի ին կը կրէ և իւր շահը ազգի շահէն վեր կը դառն անխելաղ լինի, երբեք անխելաղ: Խրիսման ամառնու գոչեց, և ժողովն այդ բանադրանքն կրկնեց: Այլ գոչեց, դիւանագետներու համար աղօթք կամ անէծք բառերն մեծ տարբերութիւն մը չունենան: Մեք Օտեանի հայրենասիրութեան հաւատացողներէն ենք, բայց ինչ որ մեզ երկիւղ կուտայ, դա Օտեանի քաղաքական համոզումներն են: Օտեանս աւելի արեւմտեան կառավարութեանց յարելու կողմնակից է: և Թուրքոյի թիւում կը հարցնեմք արդեօք երեսփոխանական ժողովն ինքն այ մասնակից է այդ համոզումի և այդ պատճառաւ: Է որ զՕտեան իրեն Ատենապետ կանէ. դեռ նոր ազգային քաղաքականութիւնը սկսաւ այն ուղղութիւնը ունենալ որ ամենին աւելի շահաւորն է հայ ազգի փրկութեան համար, պիտի վերադառնանք արդեօք այն սխալ ճանապարհին մէջ, որոյ ելքն այսքան դառնութիւն, այսքան աղէտ պատճառեց մեր ազգի: Նոքա որը ուրիշ գործ չարին, բայց միայն Ռուսոյի դէմ որոտայ, միթէ այսօր Հայաստանի վիճակն նկատելով չը պիտի հարցնեն ինքնին թէ ինչ շահեցանք:— Գեռ խրատուելու ժամն չը հասաւ մեզ համար: Այն ինչ Սալիդարիի և Լէյպտի խօսքերն տխուր ապագորութիւն կանեն հայ ժողովուրդի վրա, այն ինչ կը տեսնուի թէ Պատրիարքարանի քաղաքականութիւնը դէպի Ռուսիա կը հայել և հայ դատի պաշտպանն Ռուսիա ինքն հանդիսանալուն նշաններն կը նշանակեն, ահա հրապարակ կ'ըլլենն մեր մենակեացներն: Մէկ կողմէ իրենք համոզում ունենալով թէ հայ ազգը Արեւմուտքէն չա՞ն ունի, միւս կողմէ իրենց այս համոզումն Բ. Գրան և Անգլոյի պատասխան բողոքովն համապատասխանելով տեսնելու ինչ անկողնին ճարտարութիւնով մեզ պիտի մտնեն: Մեք ուրիշ փափաք չունինք բայց եթէ տեսնել որ մեր բոլոր ըսածներն անհիմն լինեն, այլ չատ վախճուք թէ ոչ միայն Խմբիւրեան Սրբազանի, պատրիարքական փոխանորդի, պաշտօնական ճառն է որ մեզ յոյս կուտայ: Մեք չենք կարծեր որ այս ճառն առանց Ս. Պատրիարք օրն հանձնուրկեանն գրուած լինի, այլ ճառի սիրտն ինքն ինքնակալ կը գտնէ: Հայաստանի բարեկարգութեանց վրա խօսելով կասէ ճնդն ինքն ազնիւ լորդը կարտասանէ հայոց այդ յոյսերու յետաձգող պաշտօնական յայտարարութիւնը:»

Փոխանորդ Սրբազանը մէկ կողմէ մեծ յոյս չը տաճեր Հայաստանի բարեկարգութեանց համար ձեռք առնուած միջոցներու վրայ, միւս կողմէ հայ ազգի աշխատութեան և հարկերութեան վրայ վատհուշութիւն կը յայտնէ:

Աղբյուրին քաղաքական խնդիրներով յուզվելու ժամանակ է. սակայն միայն խնդիրներով զբաղել բաւական չէ, իրական արդիւնքներ չի ձեռս բերելու միջոցներն ալ ազգին ուշադրութիւնէն պէտք չէ վրիպին:

Հայ/իսկ

# ԻՎԱՆԸ ԼՈՒՐԵՐ

Փարսիզում Կրլարօսի անունով մի պարոն խելդա-  
խաղի մէջ տարելիւով մօտ հազար ֆրանկ, վերա-  
դառնում է իր Saint-Jean փողոցում գտնված  
անհակա և զրկում է իրան կենսերից. այս անձ-  
նապանծութեան բուրբ երբ հանում է օրերը  
Տ...ին, նա իսկզբն զգուրմ է Կրլարօսի անհակը,  
և տեսնելով իր սիրեկանի անհնչացած դիակը,  
յափշտակում է յատակի վրա ընկած ըվփօլէէր,  
և արձակում է իրան վրա բարեբաղբար բոժիչ-  
ների քննութիւնը ցույց տուեց, որ գտաւկի պատ-  
ճառած վէրբը մահուկի՞ չէր, և Դոմաք յայտնեցին,  
ի՞նչ յոյս չեանէ, որ օրերդին կը կարողանան  
բժկել:

Ինքնակախ Անտոնյանը քաղաքի «Opinion» լրագրերը հաղորդում է հետևեալ հետաքրքիր լուրը. նա ասում է, որ հիւրանոցի մի երիտասարդ ծառայ, իր տիրովը մի քանի հարիւր ֆրանկ է վերցնում, որպէս զի տանէ քանկային վարչութեանը յանձնէ: Հասնապարհին այդ փողերից նա կորցնում է մի նաւակ հարկու ֆրանկանոց: Մի քանի օրից յետոյ փող կորցնող Կրիտասարդ պոլիցլայն յայտնեց, որ նրա կորցրած փողը գտել է մօզայի մագաղի-նում ծառայող մի երիտասարդ աղջկի, և ուր չէ կամենում վերադարձնել այդ փողը: Պոլիցլայն հարցուփորձի ժամանակ աղջկիը խոստովանեց որ ճշմարիտ է, նա գտել էր այդ փողը, բայց երբ նա կամենում էր այն տանել պոլիցլական վարչ-չութեանը յանձնելու, նա ճանապարհին կորցրեց Պոլիցլան, որ այնքան զերբախաւան չէ, սատակաց լեց իր խուզարկութիւնները, և աղջկիը խոստովանեց, որ այն հարիւր ֆրանկը յանձնել է իր հօրը: Այն փողը յանձնեցաւ տիրովը: Հետաքրքիրն այն է, որ երիտասարդ աղջկիը փողը գտնելուց մի քանի օր յետոյ, իր մեծ քրոջ հետ միասին մի օրվայ ճանապարհ ոտքով ուխտ էր դնայել Մօնէզիւ-քաղաքի Աստուածամտուն խնայելու, որ հարկու ֆրանկի տէրը չը յայտնոյի:

Փարպիղի պետական զանաձարանում ծառայող մի երիտասարդ, մի օր իր սովորական ժամին կամենում է գնալ զանաձարան, բայց որովհետև այդ օրը նա մի օտարակի մէջ կարած 10,000 ֆրանկ պէտք է տանէր իր հետ զանաձարանին ներկայացնելու, ուստի այդ արծաթէ փողի ծանրութեանից ստիպված, նա կառք է վերցնում, և այդպէս հասնելով զանաձարանին նա շտապ-շտապ վճարում է կառավարին, և մտնում է զանաձարանը։ Մի 10 րոպէից յետոյ նա յիշում է, որ փողը մոռացել է կառքում։ Կայծակի արագութեամբ նա դուրս է թռչում.—կառավարը անհետացել է։ Երիտասարդի յուսահատութիւնն աննկարագրելի է։ Նա չէ յիշում կառքի համարը, բայց նա շատ լաւ յիշում է, որ կառավարը նրան առաջարկեց վերցնել ցուցակի դրոշմը (Փարպիզում ամեն մի կառավար պարտաւոր է յանձնել կառք վարձող անձին մի-մի դրոշմի ցուցակ, ուր նշանակված են կառքով մանդրան բոլոր գնիւղը), իսկ ինքը մերժեց այդ։ Ամենքը հեշտ կարող են երեակայել երիտասարդի յուսահատ դրութիւնը։ Հետեւեալ օրը առաւօտ երկու ձի լծված մի կառք կանգնեց պետական զանաձարանի առաջ։ Երիտասարդին յայտնեցին որ մի կառավար կամենում է նրան տեսնել. երիտասարդը չփոթված դուրս է թռչում, և անշաղի ուրախութեամբ ճանաչում է երեկվայ կառավարին, որ իսկոյն յանձնում է նրան մոռացած օտարակը. երիտասարդը, որ շատ մեծ հարստութիւն չուներ, 20 ֆրանկնոց մի ոսկի է առաջարկում կառավարին իբրեւ վարձատրութիւն, բայց կառավարը չէ ընդունում այդ փողը ասելով, որ նա երբէք չի կամենայ օգուտ քաղել իրան պէս մի ծառայողի վրայից։ Մենք չենք խօսում մեր կառավարների մասին։ Երբ կը հաննի այն երշնակի ժամը, որ ամեն մի այսպիսի ստացած ազնուութիւն նկատենք ունի մեծ ուսումնական օգտագծ զապալարքի մէջ։

Գժպտոր Անդրեաս Ա Ք ժ Ր Ո Ն ի, որին Ս. Պե-  
տրոս-պփի միներալօգիական ընկերութիւնը հրա-  
ւիրել է իր հաշուով հետազօտել Ուրալեան սարե-  
րը մինիսրալօգիական կողմից, արդէն հասաւ Ս.  
Պետրերուրդ, և այս օրերս ուղեւորեալն է դէպի  
Ուրալեան սարերը Նիստրինիմուրդի վրայով:

Այն ֆապրորում են Գանձակից, որ այնտեղ մո-  
րիկի արդէն թեաւորվել է, լայց այնու ամիայ-  
նիւ նա դեռ քաղաքի չըլապանորից չէ հեռանում:  
Թնակիչներ նկատել են, որ նրանք արդէն սկսել  
են ձու ածել. այդ բանը երևում է նրանից, որ մո-

բեկններից շատերը սկսել են սատակել: Տեղային պոլիցիական վարչությունը հրամայել է բնակիչներին նկատել թե՛ ինչ հողերի վրա են նրանք ձու ածում, որպեսզի դի աշնանը վարելով այդ հողերը նրանց մի մասը հողի տիրել մնայ, և միւսն մնան էլ ձմեռուսյ ցրտին հեթխարկվելով, կտորոքվեն ոչնչանալու: Օրյս ունենք որ ժողովուրդը անպիտեթ չի մնաց որչպի վարչությունն այդ օգտակար հրամանը:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 23 մայիսի (4 յունիսի): Սուր  
Թամը Հրաժարվում է Ալեկո փաշայի ընտ-  
րած զլխաւոր կառավարիչներին հաստատել  
իրանց պաշտօնների մէջ, միայն այն պատճա-  
ռով, որ նրանք բոլորները են: Բ. Դուռը  
խռովութեան պատճառը այն է համարում,  
որ Ալեկո փաշան Թիւրքաց Փէսի փոխարէն  
բոլորահասն զլխարկ դորձ դրեց, և որ Ֆրիւ-  
պօսյօյում բնաւ Թիւրքաց դրօշակ չը բարձ-  
րացրին:

Իսլամով, 23 մայիսի: Այսօր հրատարակ-  
վեց Լօրիս-Մեկիբովի կարգադրությունը, որի  
մեջ նա ժողովրդի ուշադրությունը դարձնում  
է այն բանի վրա, որ գրեթե լուր Կարտեզներ-  
բում, բացառկարա վիրաւորելով հասարա-  
կական բարոյականութիւնը, յաճախ ոտնա-  
կոխ են անում վայելչութեան և պատշաճա-  
ւորութեան կանոնները: Պօլիցիային հրամայ-  
ված է հետամուտ լինել օրէնքին չը հնա-  
զանգվողներին: Որովհետեւ մեր միջնակարգ  
ուսումնարանների սաները մուտք ունեն այդ  
Կարտեզների մեջ, Լօրիս-Մեկիբովը արգելեց  
որ նրանք այլ ևս չը մտնեն այնտեղ և մը-  
տաճելով, որ այդ ղեկավարմ պօլիցիական մի-  
ջոցները բաւականացուցէ չեն, ուստի նա  
ուսումնական վարչութիւնից օրապահ վերա-  
կացուներ նշանակել տուեց: Կոմը զինում է  
ճնոդներին, խնամակալների և հասարակական  
բոյժ բարեմիտ անձանց օգնութեանը, խնդ-  
րելով, որ նրանք հեռացնեն նորահաս սերն-  
դին միտքը և հոգին ապականող տեսարան-  
ներից: Կոմը հաշտուել անգամ չէ կարող  
այն մտքի հետ, որ միջնակարգ ուսումնարան-  
ների սաները այցելեն այս հասարակաան  
գրօսարաններին:

ՖԻԼԻՊՊՈՍ, 23 մայիսի (4 յունիսի): Նոր  
կառավարութեան կազմակերպութիւնը բաղ-  
կանում է հետեւեալ անձինքներից. Կէրօստօի-  
նշանակված է գլխաւոր քարտուղար. կառա-  
վարիչներն են. պատերազմականը Վաստայիչ,  
Ֆինանսներինը Նմիդոս, երկրագործութեանը,  
առեւտրինը և հասարակական աշխատա-  
թիւններինը Վիլելիլիչ, Ժողովրդական լուս-  
սաւորութեանը Գրէշիվ և արքայադաւանա-  
թիւնը ԿէտօՎօյ: Բ. Դուբը ուշաջնում է  
այս անձինքների հաստատութիւնը: Յոյս կայ  
որ եւրօպական յանձնաժողովը կը ստանայ  
Բ. Դոնիցի այս հաստատութիւնը:

10:00, 24 մայիսի (5 յունիսի): Երէկ բազմաթիւ իշխանը հասաւ Ֆոլկստուն. նա իւր իրաւունքները Իստուէլլարի, և կայցեւ Եղիւս բուրգի հերթընդուն:

Ս. ՊԵՏԵՐՎՈՒՐԻ, 25 մայիսի: Պետական  
բանկի 5%, տոմսակը առաջին չըջանի արժե  
95 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ  
94 ռ. 50 կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին  
5%, առաջին փոխառութեան տոմսակը արժե  
240 ռ. 25 կ., երկրորդ 236 ռ. 75 կ., ա-  
րևելեան առաջին փոխառութեան տոմսակը  
արժե 92 ռ. 25 կ., երկրորդ 92 ռ. 12 կ.,  
ոսկի 8 ռ. 50 կ.: Տրամադրութիւնը ա-  
մուր է:

ԽՈՐՀԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

